

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц э.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

«ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ ԴԵՐԸ ԼՂՅ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՍՄԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Միլենա ՅՈՒՆԱՆՅԱՆ

Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության և ճարտարագիտության ֆակուլտետ, մագիստրանտ
milenahunanyan9009@gmail.com
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ. դոցենտ Եվգենյա Յայրիյան

Յուրաքանչյուր երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման գործում իր ուրույն ռազմավարական նշանակությամբ է հանդես գալիս Էներգետիկ համակարգը՝ այն դիտելով որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը:

Լեռնային Ղարաբաղի Յանրապետության տնտեսության մեջ շուրջ 90-ամյա պատմություն ունեցող Էներգետիկական զարգացման դժվարին ճանապարհ է անցել: 1923 թվականին 35կՎտ հզորության դիզելային գեներատորը առաջին էլեկտրական լամպը վառեց Ստեփանակերտում, իսկ 1930 թվականին Կար-Կառ գետի վրա կառուցվեց 480կՎտ հզորության առաջին հիդրոէլեկտրակայանը, որոնք էլ հենց խթան հանդիսացան ԼՂՅ Էներգահամակարգի ձևավորման համար: 1940-1964թթ-ին ԼՂՅ-ում կառուցվեց 7 փոքր հիդրոէլեկտրակայան /ՓՅԷԿ/, 2 օդային գիծ և տրանսֆորմատորային ենթակայան:

1976թ-ին Թար-Թառ գետի վրա կառուցվեց Սարսանգի հիդրոէլեկտրակայանը, որը համարվում է լավագույն սարքավորումներով առավելագույնս հագեցած ՅԷԿ-երից մեկը: Այս ամենի իրագործումը հնարավորություն ընձեռնեց ԼՂՅ ամբողջ տարածքում ստեղծել համեմատաբար կայուն Էներգետիկ համակարգ, որի բազայի վրա էլ ստեղծվեց Ստեփանակերտի էլեկտրացանցը, իսկ 2005 թվականին այն վերանվանվեց «ԱրցախԷներգո» ՓԲԸ:

2007թ-ին «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում ստեղծվեց «ԱՐՑԱԽ ՅԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը, որի 100% բաժնետոմսերի սեփականատերն էր ԼՂՅ-ն՝ ի դեմս կառավարության: 2008 թվականին խոշոր ներդրումներ ներգրավելու նկատառումով «ԱՐՑԱԽ ՅԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ԱՐՑԱԽ ՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերության:

«ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ-ն ՅՅ և ԼՂՅ տարածքում միակ ընկերությունն է, որն իրականացրել է Լաիսնական հրապարակային առաջարկ (**Initial Public Offering**)՝ հնարավորություն ընձեռնելով մեր հայրենակիցներին մասնակցել ԼՂՅ տնտեսության զարգացմանն ու ներդրումներ իրականացնել: «ԱՐՑԱԽ ՅԷԿ»-ի բաժնետոմսերի թողարկումը և տեղաբաշխումը ՅՅ կապիտալի շուկայում դարձել է առաջին լայնածավալ հրապարակային ներդրումային

ծրագիրը, որն իր ծավալներով և մասնակիցների թվով իր նախադեպը չի ունեցել: Առաջին հրապարակային առաջարկից հետո, ընկերության բաժնետոմսերը ընդգրկվել են NASDAQ OMX Group, Inc. միջազգային խմբի մաս հանդիսացող, ինչպես նաև աշխարհում առաջին էլեկտրոնային ֆոնդային բորսայի՝ «ՆԱՍՂԱԶ ՕԵՄԷԸՍ Արմենիա»-ի B ցուցակում՝ AHEK բորսայական հապավմամբ:¹

«ԱՐՑԱԽ ԶԷԿ» ԲԲԸ-ն ընդգրկվում է ԼՂՀ-ում առաջին 300 խոշոր հարկ վճարողների կազմի մեջ:²

«ԱՐՑԱԽ ԶԷԿ» ԲԲԸ ստեղծմամբ ԼՂՀ կառավարությունը, որպես առաջնահերթ կանխանշել էր 5 փոքր հիդրոկայանների շինարարությունը: Հարկ է նշել, որ Սարսանգի ջրամբարն ու ԶԷԿ-ը 2007 թվականից շահագործվում են «ԱՐՑԱԽ ԶԷԿ» ԲԲԸ կողմից:

2010-2015 թվականներին շահագործման են հանձնվել՝

- «Թրդի-1» ՓՅԷԿ-ը՝ 3,0 ՄՎտ դրվածքային հզորություն, 13,0 մլն կՎտ/ժամ միջին տարեկան արտադրանք,
- «Թրդի-2» ՓՅԷԿ-ը՝ 5.9 ՄՎտ դրվածքային հզորություն, 22,0 մլն կՎտ/ժամ միջին տարեկան արտադրանք,
- «Մատաղիս-1» ՓՅԷԿ-ը՝ 4.8 ՄՎտ դրվածքային հզորություն, 22,0 մլն կՎտ/ժամ միջին տարեկան արտադրանք,
- «Մատաղիս-2» ՓՅԷԿ-ը՝ 3,0 ՄՎտ դրվածքային հզորություն, 13,0 մլն կՎտ/ժամ միջին տարեկան արտադրանք,
- «Թրդի-3» ՓՅԷԿ-ը՝ 5,0 ՄՎտ դրվածքային հզորություն, 18մլն կՎտ/ժամ միջին տարեկան արտադրանք:

Ներկայումս «ԱՐՑԱԽ ԶԷԿ» ԲԲԸ-ի դրվածքային հզորությունը կազմում է 71.7 ՄՎտ՝ ներառելով նաև «Սարսանգ» ԶԷԿ-ինը՝ 50 ՄՎտ դրվածքային հզորություն: Սարսանգի հիդրոկայանը ԼՂՀ տարածքում ամենահզորն է, այն հանդիսանում է հանրապետության հուսալի ու անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման հիմքը: Նման ամբարտակներն աշխարհում շատ քիչ են, այդպիսիք հիմա պարզապես չեն կառուցում: Այն ապահովում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի 40-ից մինչև 60%-ը, իսկ նոր ԶԷԿ-երի հետ միասին՝ 70%-ը (մնացածը ներմուծվում է Հայաստանի Հանրապետությունից):

Էներգետիկան իրական դերակատարություն ունի ՀՆԱ-ի ձևավորման գործում, այդ մասին է վկայում ՀՆԱ-ի տարեցտարի զգալի աճը, ըստ որի, եթե 2005թ-ին այն կազմել է 51379 մլն ՀՀ դրամ, ապա 2009թ-ին՝ 102338,7մլն ՀՀ դրամ, 2014թ-ին՝ 188840 մլն ՀՀ դրամ, իսկ 2016-2018թթ. պետական ՄԾԾԾ համաձայն կանխատեսվում է 292000 մլն ՀՀ դրամ:³

¹ «ՆԱՍՂԱԶ ՕԵՄԷԸՍ Արմենիա» պաշտոնական կայքէջ, www.nasdaqomx.am:


² ԼՂՀ հարկային ծառայության պաշտոնական կայքէջ, www.tax.nkr.am:

³ ԼՂՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, ԼՂՀ պետական ՄԾԾԾ, www.minfin-nkr.am:

Ստորև ներկայացված է «ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ 2008-2015թթ. Էլեկտրա-
Էներգիայի արտադրության ծավալները.¹

**«ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ 2008-2015թթ. Էլեկտրաէներգիայի արտադրության
ծավալները**

Գրաֆիկ 1



2008-2009թթ. արտադրության ծավալների աճը միայն Սարսանգ ՅԷԿ-ի շահագործման արդյունքն է, իսկ 2010թ-ին արձանագրված գրեթե 49% աճը հիմնավորվում է «Թրդի-1» ՓՅԷԿ-ի շահագործմամբ: Չնայած 2011թ-ից շահագործման է հանձնվել նաև «Թրդի-2» ՓՅԷԿ-ը, սակայն Սարսանգ ՅԷԿ-ի արտադրության ծավալների նվազումը 47%-ով հիմք հանդիսացավ ընդհանուր արտադրության ծավալի 41%-ով կրճատմանը: 2012թ-ից շահագործվում են նաև «Մատադիս-1» և «Մատադիս-2» ՓՅԷԿ-ը, ընդհանուր արտադրության ծավալը ավելացնելով 27%-ով:

2013-2014թթ. արտադրությանը շարունակել են մասնակցել վերոնշյալ հինգ ՅԷԿ-ը, իսկ ընդհանուր արտադրության ծավալի աճը պայմանավորված է ընկերության հիմնական ակտիվի՝ Սարսանգ ՅԷԿ-ի արտադրության ծավալների աճով: 2015թ-ից շահագործվում է նաև «Թրդի-3» ՓՅԷԿ-ը, սակայն Սարսանգ ՅԷԿ-ի 21% արտադրության ծավալի կրճատումը բացասական անդրադարձավ ընդհանուր ծավալի վրա՝ այն կրճատելով գրեթե 16%-ով:

2016թ. «Արցախի ՅԷԿ» ԲԲԸ-ն հիդրոկայաններում նախատեսվում է արտադրել 184.50մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա:

«Թրդի-1» ՓՅԷԿ-ի գլխամասային հանգույցից վերև կառուցվում է «Թրդի-4» ՓՅԷԿ-ը 0.76 ՄՎտ հզորությամբ ու 3.46 մլն կՎտ ժամ միջին տարեկան արտադրանքի հնարավորությամբ: «Թրդի-4» ՓՅԷԿ-ի գործարկու-

¹ «ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ պաշտոնական կայքէջ, www.artsakhhek.am:

մից հետո Թրդի-1.2.3 ՓՋԷԿ-երում լրացուցիչ կարտադրվի տարեկան 11.94 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա: Սկսվել է նաև «ԼԵՎ-1» ՓՋԷԿ-ի շինարարությունը, որի դրվածքային հզորությունը կազմում է 7.0 ՄՎտ, իսկ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը կլինի 37.0 մլն կՎտ ժամ: Նշված ՓՋԷԿ-երի գործարկումից հետո «ԱՐՏԱՆ ՅԷԿ» ԲԲԸ-ն հիդրոկայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կկազմի 79,46 ՄՎտ և նրանցում տարեկան կարտադրվի մինչև 235 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա:

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում, և ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված սակագների հիման վրա արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին:¹ Հաշվի առնելով բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարվող սակագնի կայունության անհրաժեշտությունը և դրա ազդեցությունը բնակչության սոցիալական վիճակի վրա՝ ԼՂՀ կառավարությունը սուբսիդավորում է նախկինում գործող և ներկայումս սահմանված բնակչության համար էլեկտրաէներգիայի սակագների տարբերությունը: Ելնելով ծրագրի կարևորությունից՝ 2015թ. իրականացվել է տարեկան 1 մլրդ 600 մլն դրամ սուբսիդավորում, 2016թ.՝ նախատեսվում է 2000.0 մլն դրամ, 2017թ.՝ 2100.0 մլն դրամ, 2018թ.՝ 2200.0 մլն դրամ:²

Ստորև ներկայացված են ԼՂՀ 2008-2014թթ. էլեկտրահաշվեկշիռը և էլեկտրաէներգիայի սպառումն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի(%)³

ԼՂՀ 2008-2014թթ. էլեկտրահաշվեկշիռ

Աղյուսակ 1
մլն կՎտ/ժ

| | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Արտադրվել է | 97,1 | 119,2 | 177,6 | 121,9 | 164,5 | 193,2 | 224,5 |
| Ներմուծվել է | 132,7 | 134,8 | 96,3 | 153,2 | 118 | 87,2 | 78,1 |
| Էլեկտրաէներգիայի արտահոսք | 5,7 | 25,5 | 41 | 15,7 | 18,8 | 11 | 14,4 |
| Ընդամենը օգտագործվել է | 224,1 | 228,5 | 232,9 | 259,4 | 263,7 | 269,4 | 288,2 |

¹ ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի պաշտոնական կայքէջ, www.kargavorum.nkr.am:

² ԼՂՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, ԼՂՀ պետական ՄԺԾԾ, www.minfin-nkr.am:

³ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԼՂՀ Վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., www.stat-nkr.am:

Դիտարկվող ժամանակաշրջանում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների աճը ակներև է: Այսպես, եթե 2008թ-ին այն կազմել է ընդամենը 97,1 մլն կՎտ/ժ, ապա 2014թ-ին գրանցվել է աճ 132%-ով, որը վեց տարիների կտրվածքով բավականին դրական արդյունք է: 2008-2009թթ. ներմուծման ծավալներում որոշիչ փոփոխություն չի արձանագրվել, այն դեպքում, երբ 2011թ-ին ի համեմատ բազիսային տարվա գրանցվել է գրեթե 60% աճ, որն առավել պայմանավորված է էլեկտրաէներգիայի արտահոսքի ավելացմամբ: 2013-2014թթ-ին արտադրության ծավալների առավելագույնս աճ է ապահովվել, իսկ ներմուծման ծավալները հակառակը՝ դիտարկվող ժամանակաշրջանի սկզբի համեմատ 1,5-2 անգամ կրճատվել են:

ԼՂՅ էլեկտրաէներգիայի սպառումն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի, 2008-2014թթ.

Աղյուսակ 2
%

| | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Արդյունաբերություն | 15,3 | 16,9 | 15,7 | 14,3 | 15,2 | 17,9 | 16,6 |
| Գյուղատնտեսություն | 2,7 | 1,5 | 1,8 | 3,5 | 3,4 | 3,7 | 3 |
| Բնակչություն | 32,4 | 33,2 | 34,2 | 33,5 | 34,4 | 34,7 | 34,7 |
| Այլ ճյուղեր | 29,5 | 29,7 | 31,3 | 31,5 | 29,5 | 28 | 30 |
| Կորուստներն ընդհանուր օգտագործման ցանցերում | 20,2 | 18,7 | 17 | 17,2 | 17,5 | 15,7 | 15,7 |

Արդյունաբերության ոլորտի կողմից սպառումը դիտարկվող ժամանակաշրջանում ենթարկվել է որոշակի փոփոխությունների ի համեմատ վերոշալ այլ ճյուղերի, որոնց տոկոսային բաժինը գրեթե հաստատուն ու մնայուն է:

Արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործման ապահովումը, տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը հիմք կհանդիսանան ԼՂՅ տնտեսության կայուն զարգացման համար:

Միլենա Յունանյան

«ԱՐՑԱԽ ԶԷԿ» ԲԲԸ ԴԵՐԸ ԼՂՅ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՍԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ *Էլեկտրաէներգիա, արտադրություն, ներմուծում, ՅՆԱ,
սպառում, ներդրում*

Էներգետիկան ռազմավարական նշանակություն ունի ԼՂՅ անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Իր ողջ գործունեության ընթացքում «Արցախ ԶԷԿ» ԲԲԸ-ին հաջողվել է ավարտին հասցնել 5 փոքր ԶԷԿ-երի շինարարական աշխատանքները, ստեղծել նոր աշխատատեղեր, բացահայտել և իրացնել ԼՂՅ Էներգետիկայի ոլորտում առկա ներուժը, ապահովել առաջանցիկ աճի տեմպեր: Այսօր «Արցախ ԶԷԿ»-ը հանդիսանում է խոշոր և հեռանկարային ընկերություն, որը պատրաստակամ է լայնածավալ ներդրումային նախագծերի իրականացմանը: Ընկերության արտադրական հզորությունների ընդլայնման արդեն իսկ մեկնարկած ռազմավարական ներդրումային ծրագրերը կոչված են ամբողջությամբ բավարարել ԼՂՅ էլեկտրաէներգիայի նկատմամբ ներքին պահանջարկը, այնուհետև նախադրյալներ ստեղծել արտահանման համար:

Милена Унанян

РОЛЬ «АРЦАХ ГЭС» ОАО В РАЗВИТИЕ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ НКР

Ключевые слова: *электричество, производство, импорт, ВВП,
потребление, инвестиции*

Энергетика имеет стратегическое значение для обеспечения устойчивого развития независимости, безопасности и экономики НКР. На протяжении всей своей карьеры, ОАО «Арцах ГЭС» удалось завершить строительство 5 малых гидроэлектростанций, создать новых рабочих мест, а также выявить и реализовать свой потенциал в энергетическом секторе, чтобы обеспечить ускоренный рост. Сегодня «Арцах ГЭС» является самой крупной и наиболее перспективной компанией, которая стремится к реализации масштабных инвестиционных проектов. Стратегическая инвестиционная программа по расширению производственных мощностей стремится полностью удовлетворить внутренний спрос на электроэнергию, а затем создать предпосылки для экспорта.

Milena Hunanyan

**ROLE OF "ARTSAKH HPP" OJSC IN THE DEVELOPMENT OF
ENERGY SYSTEM NKR**

Keywords: *electricity, production, imports, GDP, consumption, investment*

Energy is of strategic importance for the sustainable development of independence and security of the NKR economy. Throughout his career of "Artsakh HPP" managed to complete the construction of 5 small hydro power plants, create new jobs, as well as to identify and realize their potential in the energy sector, to ensure accelerated growth. Today, "Artsakh HPP" is the largest and most promising company that is committed to the implementation of major investment projects. The strategic investment program for the expansion of production capacity aims to fully meet the domestic demand for electricity, and then create the preconditions for export.